

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ՔԵՄԱԿԱՆՔ

Դժ. 1 Ապրիլ.- Կեսօրե ետի, Ս. Սեւան Եպս. Դարիպեանի գլխավորությամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Զիքենեաց լեռ ու Համբարձման Սրբավայրին վրայ կատարուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ:

Եժ. 2 Ապրիլ.- Առաւօտուն Ս. Սեւան Եպս. Դարիպեանի գլխավորությամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Զիքենեաց լեռ ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին, ուր եպիսկոպոսական խորյր ի գլուխ պատարագեց եւ քարոզեց Ս. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան:

- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետը եւ քարոզիչն էր Ս. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան:

Ուր. 3 Ապրիլ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Ս. Կիրեղ Եպս. Գաբիկեան:

Շր. 4 Ապրիլ.- Ս. Գրիգոր Լուսաւորչին (Մուտն ի Վիրապն) : Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորիչ սեղանին վրայ: Ժամարարն էր Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 5 Ապրիլ.- Քառասնորդաց Գալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրեական բաժնին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Հանդիսապետն էր Ս. Սեւան Եպս. Դարիպեան: Ժամարար եւ քարոզիչն էր Ս. Ընծանուէր Արդ. Բաբախանեան:

Դժ. 7 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետն էր Ս. Սեւան Եպս. Դարիպեան:

Քարոզիչն էր Ս. Աւետիս Արդ. Իփրանեան:

Եժ. 9 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետը եւ քարոզիչն էր Ս. Յովսէփ Եպս. Պաղտասեան:

Շր. 11 Ապրիլ.- Յիշատակ Յարութեան Դազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Ս. Բագրատ Արդ. Պուրնէֆեան:

Կեսօրե ետի, Պատրիարք Սրբազան Հօր գլխավորությամբ Միաբանութիւնը «Հրաշափառով» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամասերն մէջ պաշտուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Քափօր

տաճարէն ներս: Թափօրապետն էր Ս. Կոմիտաս Վրդ. Շէրապէնեան:

Կիր. 12 Ապրիլ.- Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան մեր վերնամասերն մէջ: Հանդիսապետն էր Ս. Սեւան Եպս. Դարիպեան: Ժամարարն էր Ս. Էմմանուէլ Արդ. Աթաջանեան: Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս Քափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ: Թափօրակաճի ի ձեռին ունէին ձիքենեաց եւ արմաւենեաց ոստեր, մեր Քափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց Քափօրները:

Կատարուեցաւ «Անդաստան» նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Վաճի վերադարձին, Հայոց Թաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ զխորհուրդ» շարականը երգելով բարձրացան Պատրիարքարան:

- Կեսօրե ետի, Մայր Տաճարին մէջ «Դոնքացէ՛ք» ի արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը, աղոթքներ ունենալով Ս. Գուսան Վրդ. Այնանեան եւ Ս. Բագրատ Արդ. Պուրնէֆեան. իսկ Մայր Տաճարի Աւագ խորանին փակեալ վարագոյրին ետեւը կը գտնուէր Ս. Սեւան Եպս. Դարիպեան: Ս. Աւետիս Արդ. Իփրանեան կարդաց վարագոյրներու բացման մասնակցողներուն անունները: Կատարուեցաւ հանգանակութիւն՝ Ազունիէի Ազգային բուժարանին ի նպաստ:

Աւագ Երեմիաքքի 14 Ապրիլ.- Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատարան մէջ:

Հանդիսապետն էր Ս. Անուշաւան Ծ. Վրդ. Զղջանեան: Ժամարարն էր Ս. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան: Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Ս. Հաղորդութիւն: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց Քափօր» տաճարէն ներս: Թափօրապետն էր Ս. Թէոդորոս Արդ. Զաքարեան: Իսկ Ս. Կիրեղ Եպս. Գաբիկեան տուաւ բացատրութիւններ:

Աւագ Հինգշաբթի 16 Ապրիլ (Յիշատակ Ընթրեաց): Առաւօտուն Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»:

- Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ մատուցեց Ս. Կիրեղ Եպս. Գաբիկեան:

- Կեսօրե ետի, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Ունկույայ» ի սրտագրաւ կարգը, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Ներկայ էին օտար բարձրաստիճան հիւրեր,

որոնց կարգին Անկլիֆան եպիսկոպոսը, որ վերջապետության շուրջառով եւ ջաբալթագ ի գլուխ բարձրացաւ Աւագ խորան եւ Աւետարանէն հատուած մը կարդաց Անգլիկոսէնով:

- Ժամ մը ետք, փոքր թափօր մը գլխաւորութեամբ Տ. Անուշան Մ. Վրդ. Ջոզանեանի այցելեց Քրիստոսի գոյգ բանտերը: Ս. Հրեշտակապետաց վանուց գաւիթը, Ս. Զիբնիի ծառը եւ Ս. Փրկչի կիսաւեր մատուռը:

- Գիշերուան ժամը 7-12 Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»: «Փառք ի բարձունս»էն ետք Տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ, «Յայսմաւորքի Ամպիոնէն» ֆարոգեց Տ. Շնորհի Մ. Վրդ. Գասպարեան:

Ժամերգութեան աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի բո Քրիստոս»ի խնկարկութիւնը:

Աւագ Ուրբաթ.- 17 Ապրիլ (Յիշատակ Խաչելութեան):

Կէսօրը ինչ անց, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ կատարուեցաւ «Կարգ խաչելութեան»:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր «Բաղման կարգը»: Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Աւագ Շաբաթ.- 18 Ապրիլ.- (Ճրագալոյց Ս. Զատիկ): Առաւօտուն ժամը 9.15ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէն, բանալին առնուելով Աւագ Բարգման Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի ձեռքէն:

- Ժամը 11.15ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը, Հ.Ե.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւառներով եւ նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութիւն, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեալի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գրեգորեանի դրան կնիքէն: Յունաց թափօրէն ետք, մեր լուսահանը, Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Պատրիարքին հետ, մտաւ Ս. Գրեգորեան, ուրկէ հինգ վայրկեան յետոյ, դուրս տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնբարբի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամաստան պատշգամբին մէջ իր տեղը գրաւող Պատրիարք Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց Ս. Գրեգորեանի շուրջ կանգնած խուռներամ բազմութիւնը ամենագոյն ուխտաւորներուն: Ապա տեղի ունեցաւ եռադարձ թափօր: Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեալ» շարականը: Լուսահան հայր սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը:

Մեր թափօրին կը հետեւէին, Ղատոց եւ Ասորոց թափօրները:

- Վանք դարձին, դարձեալ սկաւառներու նուագախումբով առաջնորդուած, թափօր կազմուեցաւ, լուսահանը Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան շուրջառագծես եւ ապալէ պահպանակի մէջ Ս. Գրեգորեանէն լոյսը ի ձեռքին, թափօրին մէջտեղէն ֆալելով: Դաւթի բերդին մօտ Պատրիարք Սրբազան Հօր տրուեցաւ շուրջառ, խաչ, գաւազան: Շարականներ երգելով ու զանգակահարութեամբ մուտք գործեցինք Մայր Տաճար:

Պատրիարք Սրբազան Հայրը, Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատիկական Աւետարանը եւ Պահպանիչով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

- Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւն Մայր Տաճարին մէջ: Ժամաւարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրալթեան:

Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ նախատօնակ: Հանդիսապետն էր Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ապա Միաբանութիւնը եւ դպիրներ «Այսօր յարեալ» շարականը երգելով գացին Պարտիզաբաղի նաշարանը ընթերելու:

Կիր. 19 Ապրիլ.- Զատիկ Յարութեան Տօն: Կէս գիշերը երկու ժամ անց Մայրավանքի մեծ զանգը ռոտի հանեց Միաբանութիւնը, եւ Տ. Կիրիլ Եպս. Գաբրիէանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամաստան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»: Ապա Ս. Գրեգորեանի շրջափակը իջնելով, պաշտամունքը շարունակուեցաւ թափօրական գնացքով:

Մեր թափօրին կը հետեւէին Ղատոց եւ Ասորոց թափօրները: Կատարուեցաւ «Ամղաստան»: Իսկ Ս. Գրեգորեանին առջեւ «Խաչի բո Քրիստոս» խնկարկութիւնը:

Առաւօտեան ժամը 7ին Պատրիարք Սրբազան Հայրը Միաբան Հայրերու հետ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ ֆարոգեց Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան. Քրիստոսի Ս. Գրեգորեանին վրայ:

Վանք դարձին հայոց Թաղի մուտքէն «Այսօր յարեալ» շարականը երգելով Միաբանութիւնը եւ ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատիկական հանդիսաւոր «Ամղաստան»ին:

Բշ. 20 Ապրիլ.- Բ. Օր Ս. Զատիկ: Յիշատակ Մեռելոց: Տ. Սեւան Եպս. Ղարիպեան օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ ֆարոգեց Մայր Տաճարի Աւագ Խորանի վրայ:

Այա Պատրիարք Սրբազան Հայրը ամպիոնականի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն է ձեռնին, նաեւ Միաբան Հայրեր մասունքներով դարձան եռադարձ քափոր, որմէ ետք Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը բոլորին բաժնեց նշխար:

Ուր. 24 Ապրիլ. -- (83րդ Տարեդարձ Ապրիլեան ճշնոյնի):

Նահատակաց յիշատակին հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Մեր բիրաւոր նահատակներուն համար կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Այս՝ երկարածիգ քափորը կազմուած Ե. Հ. Բ. Միութեան, Հ. Ե. Միութեան եւ Հ. Մ. Բ. Միութեան սկաւտարեւոյններէ, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներէ եւ հայ հասարակութենէ, բազմաթիւ պատաստներու եւ ծաղկեպսակներու շարանով, յառաջացաւ դէպի Ս. Փրկիչ եւ ազգային գերեզմանատունը, հանգստեան շարականներու երգեցողութեամբ: Արարայի Նահատակաց Յուշարձանին շուրջ հաւաքուած, կարդացուեցաւ հանգստեան Աւետարան:

Յուշարձանին ոտին գետեղուած էին ազգային զանազան կազմակերպութիւններէ եկած ծաղկեպսակներ:

Ե. Հ. Բ. Միութեան անունով խօսք առաւ Տիկին Հռիփսիմէ Պաքարսէ Գարլանեան:

Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Շր. 25 Ապրիլ. -- Աւետումն Ս. Աստուածածնին: Առաւօտուն Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Կիր. 26 Ապրիլ. -- Նոր Կիրակէ (Կրկնագատիկ): Ըստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց լուսահան Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կէսօրէ ետք տեղի ունեցաւ «Անդաստան»:

Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Շր. 2 Մայիս. -- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հօր

գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Այս կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր քափոր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէրեան:

Կիր. 3 Մայիս. -- Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան:

Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան երկրորդ մուտքէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

«Հայր Մեր»էն առաջ Պատրիարք Սրբազանը նախագահեց Քրիստոսի Ս. Գերեզմանին աղչելու կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին:

Ս. Պատարագի վերջաւորութեան պատարագիչ Սրբազանը հանդիսապետեց «Անդաստան» արարողութեան:

Շր. 9 Մայիս. -- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Խփրանեան:

Կիր. 10 Մայիս. -- Կարմիր Կիրակէ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ:

Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Արդ. Զաքարեան:

Քարոզիչն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շր. 16 Մայիս. -- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Տ. Դանիէլ Քիչ. Գարանեան:

Կիր. 17 Մայիս. -- Տօն Երեւման Ս. Խաչին: (351): Առաւօտեան ժամերգութեան աւարտին Տ.

Կիրեղ Եպս. Գաբրիէան, ընթերցաւ Ս. Կիրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ Կայսեր, եւ հանդիսապետեց «Անդաստան»ի արարողութեան:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ, որուն վերել գետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Ժամարարն եւ քարոզիչն էր Տ. Շնորհի Ծ. Վրդ. Գասպարեան:

Պատարագէն ետք կատարուեցաւ Հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն՝ Ամեն. Տ. Գարեգին Ս. Արքեպս. Գազանեանի մահուան քառասունօրեան առթիւ, Նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Շր. 23 Մայիս. -- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 24 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերամատարան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ Բարոզիչն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոչանեան:

- Կէսօրէ ետք, տեղի ունեցաւ «Անդաստան»:

Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Դշ. 27 Մայիս.- Կէսօրէ ետք, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Հոգեշնորհ Հայրեր ինքնաշարժերով քարճարացան Զիքեմեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին մօտ կառուցուած վրանամատարան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

- Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցաւ Առաւօտեան եւ Գիշերային ժամերգութիւնը:

Եշ. 28 Մայիս.- Համբարձումն Տեառն: Առաւօտուն, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով քարճարացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, եւ Հայկական քաժնի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագը:

Պատարագիչն էր հանդիսապետ Սրբազանը որ «Հայր Մեր»էն առաջ Բարոզեց: Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին վոյսադրութեան տարեդարձին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղբանք»ին:

Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուեցաւ «Անդաստան», հանդիսապետութեամբ Պատարագիչ Սրբազանին:

Շր. 30 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան մատուռին մէջ: Ժամարարն էր Տ. Շնորհիք Ծ. Վրդ. Գասպարեան:

- Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 31 Մայիս.- Երկրորդ Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամերգութեան ետք տեղի ունեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

«Հայր Մեր»էն առաջ, Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը յայտնեց Սուրբ Էջմիածնէն ստացուած Կոնդակի մասին, ուր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կ'անդրադառնայ 1918ին Սարտարապատի հերոսական նակատամարտին, որուն մասնակցած են Ս. Էջմիածնի հայ հոգեւորականները, մասնաւորապէս Գաբրիէլ Եպս.

Յովսէփեանցը, իր հոգեւանդն խրախուսանով: Ապա՝ Տ. Աւետիս Արդ. Իփրանեան կարդաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին կոնդակը, 1918 Մայիս 28-ի Սարտարապատի ծակատամարտի 80 Ամեակի Տարեդարձին նուիրուած:

Շր. 6 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերամատարան մէջ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաշանեան:

- Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

- Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեղեցի»ի եւ հսկման կարգերուն նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 7 Յունիս.- Հոգեգալուստ: Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Անդաստան» հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Պատրիարք Սրբազան Հայրը: «Որդի Աստուծոյ» երգէն առաջ իր Բարոզին միացուց Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի աղօթքը, ուղղուած Ս. Երրորդութեան երեք անձերուն:

Սպասարկողներն էին Տ. Էմմանուէլ Արդ. Աթաշանեան եւ Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան:

- Կէսօրէ ետք, Տ. Արիս Եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը գնաց դէպի վերջին ընթերցեց վերնատունը, ուր կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆՔ

Ուրբաթ 3 Ապրիլ.- Սպանիոյ Ընդհանուր Հիւպատոսի կողմէ կազմակերպուած հրաժեշտի ընդունելութեան, Սպանիոյ Հիւպատոսարանին մէջ, ներկայ գտնուեցան Պատրիարք Սրբազան Հայրը, Տ. Սեւան Եպս. Ղարիպեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Դշ. 7 Ապրիլ.- Իսլամական Զոհի Տօնին առիթով, բոլոր կրօնական համայնքներու ներկայացուցիչները, շնորհաւորանքի այցելութիւն մը տուին Պաղեստինեան Իշխանութեան Նախագահ՝ Եսսէր Արաֆատին: Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանային Տ. Սեւան Եպս. Ղարիպեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Դշ. 8 Ապրիլ.- Դաւթի Բերդին մէջ, յարգանքի եւ հիւրասիրութեան հաւաքոյթ մը տեղի ունեցաւ, հին Բաղաբի շրջանային ռատիկանապետ՝ Դաւթ Կիվաքիի ի պատիւ:

Գնահատանքի խօսքեր ըրին երուսաղեմի շրջանային ոստիկանապետ՝ Եայիր Եցիաֆի, Ներքին Ապահովության նախարար Ավիկտոր Քահալանի։ Կրօնական համայնքներու գնահատանքը արտայայտեցին Թորգոմ Սրբազան Պատրիարք Հայրը, Յունաց ներկայացուցիչ Վասիլիոս Արքեպիսկոպոսը։ Պատրիարք Սրբազանին կ'ընկերանար Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան։

Բշ. 13 Ապրիլ.- Ժամը 7.30ին «Նոր հեռանկար մը հայկական ցեղասպանության» խորագրով, անգլերեն լեզուով դասախոսութիւն մը տեղի ունեցաւ Ժողովուրդաց վարժարանի մեծ սրահին մէջ նախաձեռնութեամբ Պատրիարքարանի Ապրիլ 24ի Միացեալ Յանձնախումբին։ Բացման խօսքը կատարեց Տ. Բագրատ Արդ. Պուրմէքեան, ներկայացնելով դասախոսը՝ Ամերիկահայ Փրօֆ. Ռոնալտ Գրիգոր Սիւնի, Շիքալոյի եւ Միշիկընի համալսարաններէն ֆաղափական գիտութեան եւ Արդի Հայոց Պատմութեան դասախոս։

Յարգելի փրօֆէսորը, մանրամասնօրէն ներկայացուց հայկական ցեղասպանութեան ծախքը, բրաքական համաքութրանական ծրագիրը տիրապետելու Անատոլոյէն մինչեւ Կեդրոնական Ասիա. Օսմանեան կայսրութեան գործելակերպը. Ազգ պետութիւններու ծագումը. երիտասարդ Թուրքերու դերը, եւ շեշտեց որ հայկական ցեղասպանութեան նախաձեռնող խնդիրը պետութիւններու կողմէ պէտք է շարունակուի։

Դասախոսութեան վերջ, հարցումներ ուղղուեցան յարգելի դասախօսին, որոնց պատասխանեց հանգամանօրէն։

Փակման խօսքը կատարեց Պատրիարք Սրբազան Հայրը, գնահատելով դասախօսին բազմերես եւ գիտական ներկայացումը եղեռնին, որ պետութիւններու կողմէ իսկ անոնս մնացած է, շահադիտական եւ ֆաղափական նպատակներով, եւ գոր հետապնդել պարտականութիւնն է հայ ազգին։

Պատրիարք Սրբազան Հօր պահպանիչէն յետոյ, ներկաները հիւրասիրուեցան։

- Նոյն օրը Պատրիարք Սրբազան Հայրը, Տ. Սեւան Եպս. Դարիպեանի եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեանի ընկերակցութեամբ գնաց Պապական նուիրակին եւ Անկլիկան Եպս.ին շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

Գշ. 14 Ապրիլ.- Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաքանութիւնը գնաց Լատինաց Պատրիարքին եւ Ֆրանչիսկեան Միաքանութեան շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

- Նոյն օրը Պատրիարք Սրբազան Հայրը, Տ. Սեւան Դարիպեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան, Պապական նուիրակին «Ողջեք»ի հիւրասիրութեան

մասնակցեցան, Նօր Տամի մէջ։

Դշ. 15 Ապրիլ.- Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ Միաքանութիւնը գնաց Յոյն կաթողիկոսներուն, եւ Լուտերականներուն շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոյնեան եւ Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէքեան գացին Մարօնիքներու համայնքին փոխանորդին շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

- Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոյնեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան գացին հայ կաթողիկոսներուն, շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

Գշ. 21 Ապրիլ.- Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաքանութիւնը գնաց Յունաց Պատրիարքին շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

- Նոյն օրը, Հայոց Ս. Զատիկուայ Տօնին առիւ շնորհաւորութեան եկան.-

Ֆրանչիսկեաններու մեծաւոր Հայր Գիւքոսը իր միաքանութեամբ, Լատինաց Պատրիարքը, Պապական նուիրակին փոխանորդը, Դպտոց, Ասորոց եւ Հապշաց եպիսկոպոսները իրենց Միաքանութիւնով, Մարօնիքներուն եպիսկոպոսը. Յոյն կաթողիկոսներուն եպիսկոպոսը, Լուտերականները եւ Անկլիկաններուն եպիսկոպոսը։

Դշ. 22 Ապրիլ.- Յունաց Պատրիարքը անկարող լինելով սանդուխներ բարձրանալ ֆալելով, Միաքանութեան անդամները Վասիլիոս Եպս.ի գլխաւորութեամբ եկան շնորհաւորելու հայոց Ս. Զատիկը։

- Նոյն օրը Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ Միաքանութիւնը գնաց Ասորիներուն, Դպտիներուն եւ Հապշներուն շնորհաւորելու համար անոնց Ս. Զատիկը։

Եշ. 23 Ապրիլ.- Հայոց Ս. Զատիկը շնորհաւորելու եկան Ֆելսալ Հիւսէյնի եւ Պաղեստինեան կառավարութեան ներկայացուցիչները։

Ուր. 24 Ապրիլ.- (83րդ Տարեդարձ Ապրիլեան Եղեռնի)։ Երեկոյին, Ժողովուրդաց վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Յուշահանդէս, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր։

Հանդիսութիւնը բացուեցաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգ «Մեր Հայրենիք»ով։ Օրուայ հանդիսավարը՝ Տ. Բագրատ Արդ. Պուրմէքեան, բացման խօսքը ըրաւ որմէ ետք Հ.Ե.Մ.ի կողմէ խօսեցաւ Տիար Յակոբ Անդրեասեան, Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ Տիար Սերոբ Սահակեան եւ Ե.Հ.Բ.Մ. կողմէ Տիար Արամ Խաչատուրեան։

Տեղի ունեցան արտասանութիւններ եւ երգեր, փակման խօսքը ըրաւ Պատրիարք Սրբազան Հայրը։

Բշ. 27 Ապրիլ.- Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցությամբ Տ. Սեւան Եպս. Դարիպեանի և Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեանի, ներկայ եղան Բաղաձին մէջ Ռուս եկեղեցւոյ շուրջ եղող հրապարակին անուանակոչման հանդիսութեան:

Գշ. 28 Ապրիլ.- Տ. Սեւան Եպս. Դարիպեան և Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան Պաղեստինի Իսլամական Աֆգաֆի նախարար Հասան Բլ Թահպուպի թաղման ներկայ եղան:

- Նոյն օրը Տ. Սեւան Եպս. Դարիպեան և Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան Յունական Հիւսիսարևմտեան այցելեցին Սրբազան Պատրիարք Հօր կողմէ ցաւակցութիւն յայտնելու համար Յունաստանի նախկին վարչապետ Գարամանլիսի մահուան առթիւ:

Եշ. 30 Ապրիլ.- Հրեաներու անկախութեան 50 ամեակին առիթով եղած հրաւերներուն մասնակցեցան հետեւեալները.-

- Դաւրի բերդին մէջ, Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան, Տ. Գրուսան Վրդ. Ալեանեան և Տ. Թէոդորոս Արդ. Ջաֆարեան:

- Վարչապետարանին մէջ, Միացեալ Նահանգաց Փոխ Նախագահ Ալ Կորի ժամանման առիթով, Պատրիարք Սրբազան Հայրը և Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

- Երբայական համալսարանի բացօդային բնադրութեան յայտագրին, Պատրիարք Սրբազան Հայրը և Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

- Նախագահին շնորհաւորութեան, Տ. Գրուսան Վրդ. Ալեանեան և Տ. Բագրատ Արդ. Պուրմէճեան:

Ուր. 1 Մայիս.- Պատրիարքարան այցելեցին Ամերիկայի եպիսկոպոսական եկեղեցւոյ նոր ընտրուած Առաջնորդ եպիսկոպոսը Ֆրէնկ Կրիզուստ և իր տիկինը, ընկերակցությամբ արար-անկիւման նորընտիր եպիսկոպոս Ռիախ Ապուէլ Ասալի, և չորս հետեւորդներով, որոնք Պատրիարք Սրբազան Հօր հետ կէսօրուան ճաշին հիւրասիրուեցան Սեղանատան մէջ:

Շր. 2 Մայիս.- Կեսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցությամբ Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեանի և Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի այցելեց Միացեալ Նահանգաց եպիսկոպոսական եկեղեցւոյ Առաջնորդին ի պատիւ տրուած ընդունելութեան Երուսաղէմի Սէյն Ջօրն եկեղեցւոյ շրջակային մէջ:

Գշ. 5 Մայիս.- Պատրիարքարան այցելեց նոր ոստիկանապետ Նիսսօն, որ Ս. Յարութեան Տաճարի հսկողութեան պատասխանատու է, և Սալիպան որ Պատրիարքարանի մօտ եղող ոստիկանատան վերակացու է:

Շր. 16 Մայիս.- Սրբոց Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Զեռագործի Պազար հովանաւորութեամբ և նախագահութեամբ Ամեն. Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հօր, 6-16 տարեկան աշակերտուհիներու կողմէ ասեղնագործուած, Տիկին Ամբաստան Գարակէօզեանի և Օր. Ազնիւ Պաղասարեանի ցուցմունքներով:

Բշ. 18 Մայիս.- Խորհրդարանին մէջ Էզեր Վայզմանի նախագահութեան երկրորդ ընտրութեան առթիւ կատարուած երդման արարողութեան հանդիսութեան և հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զոհանեան:

Դշ. 20 Մայիս.- Տիար Հայկ Գրիգորեան, Լոս Անճելոսի Ատենապետ Երուսաղէմի Պատրիարքութեան Օժանդակող կազմակերպութեան, իր Տիկնոջ՝ Լուսինին հետ, Երուսաղէմ այցելեց, և իրենց շրջապատյոյ ծրագրին համաձայն, Մայիս 27ին մեկնեցան դէպի Իսթանպուլ և պատմական հայ Բաղաձինը Սերաստիա, Տիգրանակերտ, Անի: Հայկ Գրիգորեան ժառանգաւորաց Վարժարանի սաներէն եղած է 1938-42 թուականներուն: Ներկայիս իր անձնական համակարգիչին միջոցաւ Հայ Երուսաղէմի մասին տեղեկատուութիւն բացի, Հայ Պատրիարքներու հատորի մը տպագրութեան հետամուտ է: Երուսաղէմի Պատրիարքութեան Օժանդակող կազմակերպութիւնը ժառանգաւորաց Վարժարանին կը հայրայրէ Կաղանդի նուէրներ, գրեական պիտոյններ, և այլ կարիքներ:

Դշ. 20 Մայիս.- Գեր. Տ. Արիս Եպս. Շիրվանեան ժամանեց Երուսաղէմ, իրրեւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամ, բազում տարիներ Միացեալ Նահանգաց մէջ պաշտօնավարել յետոյ: Տնօրէն Ժողովի որոշմամբ Արիս Սրբազան նշանակուած է Վարիչ Պատրիարքարանիս Կրօնական Է՛կումէնիք Յարաբերութեանց և Արտաքին Յարաբերութեանց, որոնց ծիրին մէջ կ'իյնան Յարանուանութեանց, Պաղեստինեան և Իսրայէլեան Կառավարութեանց, նաեւ օտար պետութեանց կողմէ Իսրայէլի մէջ նշանակուած դեսպաններու և հիւպատոսներու հետ փոխ-յարաբերութիւններ:

Արիս Սրբազան իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Հայաստանի մէջ բրիտանութեան հաստատման 1700 ամեակի Միջ. եկեղեցական տօնակատարութեանց և Ռիտազնացութեան, և Ս. Տեղեաց համար նշանակուած յանձնախումբերու գործունէութեանց:

Ուր. 22 Մայիս.- Ամերիկայէն Երուսաղէմի Ս. Ղազար Ասպնչական և Զինուորական Կարգին կողմէ կազմակերպուած ընդունելութեան, Նօթր-Տամ պանդոկին մէջ, Կարգին հիմնադրութեան 900 ամեակին առթիւ Երուսաղէմի մէջ, ներկայ

գտնուեցան Ամեն. Տ. Պատրիարք Սրբազան Հայրը եւ Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Այս առիթով, Երուսաղէմի քրիստոնեայ հոգեւոր պետերը պարգեւատրուեցան, սոյն հաստատութեան զանազան աստիճանի շխմաշխմեմով, որոնց կարգին, Նորին Ամենապատուութիւն Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան, Պատրիարք Հայոց Երուսաղէմի, պարգեւատրուեցաւ, իրրեւ պատուակալ անդամ հաստատութեան Ամբիկեան մասնաճիւղին: Ի քաջակայութեան Յունաց Ամեն. Տ. Տէտորոս Պատրիարքին, շխմաշխմեմ յանձնուեցաւ Մեքրոպոլիս Վասիլիոս եպիսկոպոսին:

Ծր. 23 Մայիս.- Սրտաբան բժիշկ, Տօքթօր Կարօ Կարապետեան, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, դասախօսութիւն մը տուաւ, մարդկային մարմնի գործարաններու գործունէութեանց եւ պաշտօններու մասին, առողջապահական գիտելիքներ բխողրելով:

Բշ. 1 Յունիս.- Ֆրաչիսկեան Միաբանութեան նորընտիր Մեծաւոր Հայր Ճիօվաննի Պաքիսքելլի ժամանման առիթով, Սէյնք Սէվիլլերի եկեղեցւոյ մէջ տեղի ունեցող արարողութեան, ներկայ եղան Տ. Արիս եպս. Շիրվանեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Նոյնպէս յաջորդ օրը, Ս. Յարութեան Տանարի մուտքին, ուր Յունաց Տ. Դանիէլ եպիսկոպոսին հետ նաեւ Հայոց Տեսուչ Տ. Վաղարշ եպս. Խաչատրեան ղիմաւորեցին եւ մասնակցեցան արարողութեան:

Դշ. 3 Յունիս.- Իտալիոյ Ընդհանուր Հիւպատոսի կողմէ կազմակերպուած ընդունելութեան, Իտալիոյ Ընդհանուր Հիւպատոսարանին մէջ, Իտալիոյ Ազգային Օրումն առիւ, ներկայ գտնուեցան Տ. Արիս եպս. Շիրվանեան, Տ. Տնորիք Ծ. Վրդ. Գասպարեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Եշ. 4 Յունիս.- Հայր Ճիօվաննի Պաքիսքելլին, ի գլուխ ֆրաչիսկեան Միաբանութեան, այցելութեան եկաւ Հայոց Պատրիարքարան: Ընդունուեցաւ Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքի կողմէ: Նա առաջնորդուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տանար, ուր տրուեցաւ սրբատեղիին մասին ծանօթութիւն:

- Նոյն օրը, Արեւելեան Երուսաղէմի մէջ, Իտալական Հիւպատոսարանի Ազգային Տօնին հանդիսութեան ներկայ եղան Պատրիարք Սրբազան Հայրը, Տ. Արիս եպս. Շիրվանեան, Տ. Սեւան եպս. Ղարիպեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Ուր. 5 Յունիս.- Ժառանգաւորաց վարժարանի սրահին մէջ դասախօսեց Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի Արեւելեան Ուսմանց հիմնարկի վարիչ Տէր. Բրօֆեսօր Նիքոլայ

Յովհաննիսեան նիւթ ունենալով Հայաստանի Արտաքին Քաղաքականութիւնը:

Ուր. 5 Յունիս.- Երուսաղէմի Անկլիկան եկեղեցւոյ Առաջնորդ եպիսկոպոսին, Գեր. Տ. Սամիր Քաֆիքի կողմէ Սէյն Ճօրն հիւրանոցին մէջ տրուած ընդունելութեան, ի պատիւ եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ընդհանուր Քարտուղար՝ Տէր. Քոնրատ Ռէյզերի, ներկայ գտնուեցաւ Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Ծր. 6 Յունիս.- Տէր. Քոնրատ Ռէյզեր՝ ընկերակցութեամբ Միջին Արեւելի եկեղեցիներու Խորհուրդի Երուսաղէմի գրասենեակի Վարիչ Հրաչ Յակոբեանի, այցելութեան եկաւ Պատրիարք Սրբազան Հօր, ապա՝ Միաբանակալն սեղանատան մէջ նաշէն յետոյ, այցելեցին Ս. Հրեշտակապետաց եկեղեցին, Հէլէն եւ Եղուարդ Մարտիկեան քանդարանը եւ վանքին շրջափակը:

Կիր. 7 Յունիս.- Ֆրանչիսկեան Միաբանութեան նորընտիր Քիւստոսին Բեքդեհէմի Ս. Ծննդեան Տանար այցելութեան առիթով, ղիմաւորութեան արարողութեան մասնակցեցան Յունաց Տեսուչը, եւ մեր Ազգ Բարգմանը՝ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, եւ Տ. Արիս եպս. Շիրվանեան, ինչպէս նաեւ պետական անձնաւորութիւններ:

Կիր. 7 Յունիս.- Երեկոյեան Ժառանգաւորաց վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց Երկ. Վարժարանի Ամալեքի հանդէսը: Հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Ամեն. Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հօր:

- Նոյն օրը, Տ. Արիս եպս. Շիրվանեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, ներկայ գտնուեցան Ֆրանչիսկեաններուն նոր Բիւքոստին առաջին մուտքի հանդիսութեան Բեքդեհէմի Ս. Ծննդեան վայրին մէջ:

Բշ. 8 Յունիս.- Ռուսաց Ս. Հոգիի Գալստեան Տօնին առիւ Ռուսաց Ս. Հոգիի Գալստեան եկեղեցիին մէջ ներկայ գտնուեցան Տ. Արիս եպս. Շիրվանեան եւ Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

- Նոյն օրը, Ռուս Պատրիարքի անուան Տօնին առիւ եւ Ս. Հոգիի Գալստեան Տօնին առիւ տրուած ընդունելութեան իրենց վանքին մէջ ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս եպս. Շիրվանեան, Տ. Սեւան եպս. Ղարիպեանի եւ Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի: